Արձանագրություն N 3

*<<ԾՆՈՒՀ-ԳՀԱՊՁԲ-20/1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով հայտարարված << Ծաղկաձորի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի*

Ք.Ծաղկաձոր 31 հունվար 2020թ.

ժամը 09:30

Մասնակցում էին հանձնաժողովի

Նախագահ՝ Գարիկ Հայրապետյան

անդամներ՝ Աննա Ասատրյան

Գայանե Միլիտոնյան

Արմենուհի Ասատրյան

քարտուղար՝ Արփինե Ավետիսյան

1. ***Տեղեկություններ <<ԾՆՈՒՀ-ԳՀԱՊՁԲ-20/1>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին***

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը ներկայացվել են **Կոտայքի մարզ, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեով**: Հայտերի բացումը տեղի է ունեցել հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2020 թվականի հունվարի 31-ին, ժամը 09:30-ին, **Կոտայքի մարզ, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9** հասցեում:

2. ***<<ԾՆՈՒՀ-ԳՀԱՊՁԲ-20/1>> ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին***

Գնման ընթացակարգին հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| h/h | Մասնակիցների անվանումները, հասցեները հեռախոսահամարները և էլ.փոստի հասցեները |
|---|---|
| 1 | <<ԱԿՎԱՄԱՐԻՆ>> ՍՊԸ /Կոտայքի մարզ, գյուղ Արգել 14փ. 262., 093-168-468, akvamarin.spy@yandex.ru/ |
| 2 | <<ԶԱՎԱ-ԳՐՈՒՊ>> ՍՊԸ /Կոտայքի մարզ, գ.Մարմարիկ 4/19, 093-25-26-43, zavagroup@mail.ru/ |
| 3 | <<ՍԵՎԱՆԻ ՀԱՑԻ ԳՈՐԾԱՐԱՆ>> ՓԲԸ /ք.Երևան, Օհանովի 15/1, 077-25-08-82, sevanhac@mail.ru; info@eltender.am/ |
| 4 | <<ՀԵԼԹԻ ՖՈՒԴ>> ՍՊԸ /Կոտայքի մարզ, ք.Եղվարդ, Երևանյան 2, 093-995-895, healthyfood2013@mail.ru/ |

### 3. *Տվյալներ բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին*

Ընդունել ի գիտություն, որ

3.1 **<<ԱԿՎԱՄԱՐԻՆ>> ՍՊԸ-ի, <<ՋԱՎԱ-ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի և <<ՍԵՎԱՆԻ ՀԱՑԻ ԳՈՐԾԱՐԱՆ>> ՓԲԸ-ի** կողմից ներկայացված ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան, ներկայացված փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

3.2 **<<ՀԵԼԹԻ ՖՈՒԴ>> ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում արձանագրվել է **անհամապատասխանություն** հրավերի պահանջների նկատմամբ՝ **Հավելված 1.1-ում** մասնակցի կողմից **<<մակնիշ>> և <<արտադրողի անվանում>>** սյունյակները **լրացված չեն**:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:*

### 4. *Նիստը կասեցնելու մասին*

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 41-րդ կետի պահանջները՝ հանձնաժողովը որոշեց **մեկ աշխատանքային օրով** կասեցնել նիստը և ծանուցել **<<ՀԵԼԹԻ ՖՈՒԴ>> ՍՊԸ** -ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:*

### 5. *Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը,ժամը և վայրը հաստատելու մասին*

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2020 թվականի փետրվարի 1-ին, ժամը 12:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարանի վարչական շենքում, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:*

| Հանձնաժողովի նիստին ներկա անդամի անունը,ազգանունը | Ստորագրությունը |
| --- | --- |
| *Նախագահ՝ Գարիկ Հայրապետյան* | |
| *Անդամներ՝ Աննա Ասատրյան* | |
| *Գայանե Միլիտոնյան* | |
| *Արմենուհի Ասատրյան* | |
| *Քարտուղար՝ Արփինե Ավետիսյան* | |